ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Արցախի Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի 2020 թվականի մարտի 31-ի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	Իրավական հիմքը (ԱՀ ընտրական օրենսգրքի հոդված)	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
1	Դիտորդներ հավատարմագրելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ***	31, մաս 2	21.01.2020-21.03.2020	Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներ, ԱՀ և օտարերկրյա հասարակական կազմակերպություններ
2	Քվեարկության օրը ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու համար հավատարմագրվելու դիմումը և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ***	31, մաս 7	մինչև 16.03.2020	Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ
3	Ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց, դիտորդների և ընտրողների համար ուսումնական նյութեր մշակվում և հրապարակվում են. ***ընտրությունների անցկացման ժամանակահատվածում***	51, մաս 2 կետ 13	Հունվար-մարտ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
4	Թեկնածուի՝ վերջին 10 տարում միայն ԱՀ քաղաքացի հանդիսանալու և վերջին 10 տարում ԱՀ-ում մշտապես բնակվելու մասին տեղեկանքը տրամադրվում է դիմելուց հետո. ***եռօրյա ժամկետում, բայց ոչ շուտ, քան մինչև Հանրապետության նախագահի ընտրության օրվա մասին հաղորդագրության հրապարակումը***	80, մաս 4 կետ 3, մաս 5	21.01.2020-15.02.2020	Լիազոր մարմին (այսուհետ՝ ոստիկանություն)
5	Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների՝ վերջին 5 տարում միայն ԱՀ քաղաքացի հանդիսանալու և վերջին 5 տարում ԱՀ-ում մշտապես բնակվելու մասին տեղեկանքը տրամադրվում է դիմելուց հետո. ***եռօրյա ժամկետում, բայց ոչ շուտ, քան մինչև ընտրությունների նշանակումը***	109, մաս 3 կետ 6, մաս 4	21.01.2020-15.02.2020	Ոստիկանություն

6	Ընտրական շտաբները կարող են կազմավորվել. ***ընտրություն նշանակվելուց հետո***	19, մաս 4	սկսած 21.01.2020-ից	Թեկնածուներ, կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ)
7	Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ ընտրական տարածքների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. ***1) ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 3 օր հետո*** ***2) քվեարկության օրվանից 3 օր առաջ***	12, մաս 2	1) 23.01.2020 2) 28.03.2020	Ոստիկանություն
8	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Արցախի հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը, ինչպես նաև Հանրապետության նախագահի թեկնածուներին (այսուհետ՝ թեկնածուներ), Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) (այսուհետ՝ կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ)) եթերաժամ տրամադրող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող մյուս ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (անկախ սեփականության ձևից) վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը հրապարակվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո***	20, մասեր 4, 5	մինչև 30.01.2020	Արցախի հանրային ռադիո և հանրային հեռուստատեսություն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերություններ և հեռուստաընկերություն-ներ
9	Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում (այսուհետ՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն) ԱՀ-ում աուդիտորի որակավորում ստացած ընտրական իրավունք ունեցող մեկ աուդիտոր կարող է նշանակել. ***ընտրությունները նշանակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում***	29, մաս 3	մինչև 30.01.2020	Ազգային ժողովի խմբակցություններ
10	Թեկնածուներին, կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրվում է. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո***	19, մաս 3	մինչև 09.02.2020	Համայնքների ղեկավարներ՝ շրջանների վարչակազմերի ղեկավարների միջոցով, Ստեփանակերտի քաղաքապետ
11	Համայնքի տարածքում քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշում ընդունվում է. ***նախընտրական քարոզչությունն սկսելուց 10 օր առաջ***	21, մաս 5	մինչև 16.02.2020	Համայնքի ղեկավար
12	Թեկնածուները, կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) գրանցման համար փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55 և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն***	98, մաս 1 121, մաս 3	05.02.2020-15.02.2020-ի ժամը 18:00-ն	Թեկնածու, թեկնածուի լիազոր ներկայացուցիչ, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազոր ներկայացուցիչ

13	Զորամասերում, ազգային անվտանգության ծառայության և ոստիկանության զորքերում հաշվառված ընտրողների թվերը լիազոր մարմին և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ***	10, մաս 11	մինչև 10.02.2020	Պաշտպանության նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն, ոստիկանություն
14	Թեկնածուների գրանցումը, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45 և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն***	98, մաս 2 121, մաս 4	15.02.2020-25.02.2020-ի ժամը 18:00-ն	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
15	Թեկնածուների անունների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) անվանումների հերթականությունը քվեաթերթիկում որոշելու և նշելու համար վիճակահանությունն անցկացվում է. ***գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրը***	91, մաս 1 119, մաս 1	25.02.2020-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
16	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ***	16, մաս 1	մինչև 15.02.2020	Ոստիկանություն՝ մասնակցությամբ համայնքի ղեկավարի և տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի
17	Տեղամասային կենտրոնները (այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկում) սահմանվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ***	18, մաս 1	մինչև 17.02.2020	Համայնքի ղեկավար (քրեակատարողական հիմնարկի ղեկավար)
18	Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***սահմանվելուց հետո երկօրյա ժամկետում***	52, մաս 1, կետ 2	մինչև 19.02.2020	Տարածքային ընտրական հանձնաժողով
19	ԱՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար՝ էլեկտրոնային տարբերակով Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ***	9, մաս 4	մինչև 19.02.2020	Ոստիկանություն
20	ԱՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ որոնման հնարավորությամբ տեղադրվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ***	9, մաս 4	մինչև 19.02.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
21	Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ***	12, մաս 1	մինչև 20.02.2020	Ոստիկանություն

22	Ընտրողների ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ համացանցում՝ www.police.nkr.am հասցեով տեղադրվում է. ***քվեարկության օրվանից 40 օր և 2 օր առաջ***	13, մաս 2	20.02.2020 29.03.2020	Ոստիկանություն
23	Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից 40 օր առաջ***	13, մաս 3	20.02.2020	Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող
24	Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերը ներկայացվելու դեպքում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. ***ներկայացվելուց հետո՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, բայց ոչ շուտ, քան նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը***	8 մաս 4	26.02.2020-ից ոչ շուտ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
25	Թեկնածուներին, կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) Արցախի հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանվում է. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը***	20, մաս 2	26.02.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
26	Թեկնածուների գրանցման մասին հաղորդագրությունը, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակները հրապարակվում է. ***գրանցման համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում***	82, մաս 4 110, մաս 3	մինչև 28.02.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
27	Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկանք Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրը մեկ***	26, մաս 7	28.02.2020-ից սկսած՝ երեք աշխատանքային օրը մեկ	ԱՀ տարածքում գործող առևտրային բանկեր
28	Հանրապետության նախագահի թեկնածուները, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում***	8, մաս 5	մինչև 01.03.2020	Հանրապետության նախագահի և պատգամավորի թեկնածուներ
29	Կուսակցության (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում***	8, մաս 5	մինչև 01.03.2020	Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազոր ներկայացուցիչ
30	Թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազոր ներկայացուցչին կազմավորված ընտրական տեղամասերի թվի եռապատիկին հավասար թվով վստահված անձանց վկայականներ տրվում է. ***թեկնածուներին, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակները գրանցելուց հետո՝ 5-օրյա ժամկետում***	33, մաս 2	մինչև 01.03.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

31	ԱՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը հրապարակվում է. ***քվեարկության նախորդ օրը***	8, մաս 7	30.03.2020	Ոստիկանություն
32	Տեղամասային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու համար հայտերը համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն***	44, մաս 2	01.03.2020- 06.03.2020-ի ժամը 18:00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամներ
33	Թեկնածուները, կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) ԱՀ տարածքում գործող որևէ առևտրային բանկում նախընտրական հիմնադրամ պարտավոր են բացել. ***գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 7 օրվա ընթացքում***	26, մաս 1	մինչև 03.03.2020	Թեկնածուներ, կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ)
34	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է. ***գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը, ավարտվում՝ քվեարկության օրվանից 1 օր առաջ***	19, մաս 1	26.02.2020- 29.03.2020-ի ժամը 24:00-ն	Նախընտրական քարոզչություն իրականացնողներ
35	Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում կայանում է. ***տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում***	44, մաս 5	03.03.2020-08.03.2020	Տեղամասային ընտրական հանձնաժողով
36	Իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է. ***1) նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը*** ***2) ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	28, մաս 1	1) 07.03.2020 2) 04.04.2020	Թեկնածուներ, կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ)
37	Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում է և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում***	29, մաս 5	1) մինչև 14.03.2020 2) մինչև 11.04.2020	Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
38	Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. ***հայտարարագրերը ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում***	28, մաս 4	1) մինչև 10.03.2020 2) մինչև 07.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

39	Թեկնածուները, կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները կամ դաշինքի անդամ կուսակցություններն) ինքնաբացարկի մասին դիմում կարող են ներկայացնել. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն***	88, մաս 5 116, մաս 3, 4	մինչև 21.03.2020-ի ժամը 18:00-ն	Թեկնածուներ (նախագահի, պատգամավորի), կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ)
40	Քվեաթերթիկների տպագրման համար ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ ընտրական տարածքների և ընտրական տեղամասերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	12, մաս 2 59, մաս 6	21.03.2020	Ոստիկանություն
41	Քվեաթերթիկների նմուշները սահմանվում են. ***քվեարկության օրվանից առաջ՝ 10-րդ օրը***	51, մաս 2 կետ 5 59, մաս 2	21.03.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
42	Զորամասում հաշվառված ընտրողների ցուցակները զորամասում՝ զինծառայողների համար տեսանելի տեղում փակցվում են. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	13, մաս 5	21.03.2020	Զորամասի հրամանատար
43	Քվեաթերթիկները տպագրվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	59, մաս 6	21.03.2020-28.03.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
44	Այլ համայնքի հաշվառում (այդ թվում՝ հենաշարժական հաշմանդամություն) ունեցող ընտրողներն ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ***	10, մաս 3	մինչև 21.03.2020	Ընտրողներ, ոստիկանություն
45	Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները՝ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում (որտեղ նշանակված են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ) ընդգրկվելու մասին դիմում, լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն*** ***Նշված ժամկետում ՏՀՀ անդամին ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմին կարող է ներկայացվել նաև տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի դիմումի հիման վրա***	10, մաս 5	մինչև 21.03.2020-ի ժամը 14:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ, տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ, ոստիկանություն
46	ԱՀ-ում հաշվառում չունեցող ընտրողները քվեարկությանը մասնակցելու համար ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ***	10, մաս 6	մինչև 24.03.2020	ԱՀ-ում հաշվառում չունեցող ընտրողներ, ոստիկանություն

47	Քվեարկության օրն ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակը կազմվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն***	10, մաս 7	մինչև 27.03.2020-ի ժամը 14:00-ն	Ոստիկանություն
48	Քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողների ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	10, մաս 13	մինչև 28.03.2020	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար՝ տարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչի մասնակցությամբ
49	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ***	14, մաս 1	մինչև 26.03.2020	Յուրաքանչյուր ոք, ոստիկանություն
50	Ստացիոնար բուժման մեջ գտնվող և քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող, ստացիոնար բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրողների ցուցակը լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն***	10, մաս 8	մինչև 28.03.2020-ի ժամը 14:00-ն	Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավար
51	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը կամ քարտուղարը այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին կարող է ներկայացնել. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն***	45, մաս 4 կետ 4	մինչև 28.03.2020-ի ժամը 18:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով
52	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասին մեկ կնիք հաշվարկով տարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5 և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	60, մաս 3	26.03.2020-28.03.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
53	Ընտրողներին քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի և ժամանակի մասին ծանուցագրեր ուղարկվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	13, մաս 6	մինչև 28.03.2020	Ոստիկանություն
54	Տեղամասային կենտրոնում փակցվող և տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից գործածվող ընտրողների ցուցակները՝ կազմված մատյանի ձևով (այդ թվում՝ ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողների լրացուցիչ ցուցակը)՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները, ինչպես նաև քվեարկության օրն ընտրական տեղամասում ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	12, մաս 3	29.03.2020	Ոստիկանություն

55	Զորամասում հաշվառված ընտրողների ցուցակները տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են. ***քվեարկության օրվանից 3 օր առաջ***	12, մաս 4	28.03.2020	Զորամասի հրամանատար
56	Քրեակատարողական հիմնարկում քվեարկող ընտրողների ցուցակը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին հանձնվում է. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	12, մաս 5	29.03.2020	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
57	ԱՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում ընտրողների ցուցակները կազմվում են. ***ընտրությունը նշանակելուց հետո՝ մինչև քվեարկության ավարտը***	9, մաս 3	21.01.2020- 31.03.2020-ի ժամը 20:00-ն	ԱՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն
58	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ ստացիոնար բուժման մեջ գտնվող անձանց լրացուցիչ ցուցակի օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	13, մաս 4	29.03.2020	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
59	Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է. ***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24:00-ն***	57, մաս 3	մինչև 30.03.2020-ի ժամը 24:00-ն	Հանձնաժողովի ղեկավար, տեղամասային ընտրական հանձնաժողով
60	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, հանձնաժողովի կնիքը հանձնվում են. ***քվեարկության նախորդ օրը***	59, մաս 7 60, մաս 4	30.03.2020	Տարածքային ընտրական հանձնաժողով
61	Քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում իրեն ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմին կարող է ներկայացվել. ***քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև քվեարկության ավարտը***	14, մաս 2	26.03.2020- 31.03.2020-ի ժամը 20:00-ն	Ընտրողներ, ոստիկանություն
62	Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունները դադարեցվում են ***քվեարկության օրվանից***	27, մաս 7	31.03.2020-ից	ԱՀ տարածքում գործող առևտրային բանկեր
63	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն սկսվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին***	64, մաս 1	31.03.2020 ժամը 07:00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով
64	Քվեարկությունը սկսվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 08:00-ից***	56, մաս 1 65, մաս 1	31.03.2020 ժամը 08:00-ից	Տեղամասային ընտրական հանձնաժողով

65	Ընտրությունների ընթացքի մասին տեղեկությունները հրապարակվում են. ***քվեարկության օրը՝ ժամը 09:00-ին*** ժամը 12:00-ից սկսած՝ մինչև ժամը 21:00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ ընտրական տարածքների հրապարակվում են. ***քվեարկության օրը՝ 12:00-ին, 15:00-ին, 18:00-ին և 21:00-ին***	8, մաս 9	30.03.2020-ի ժամը 09:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 18:00-ին և 21:00-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
66	Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում ստացիոնար բուժման մեջ գտնվող, քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների համար քվեարկությունը կազմակերպվում է. ***քվեարկության օրը ժամը 08:00-ից հետո մինչև ժամը 18:00-ն***	56, մաս 2	31.03.2020-ի ժամը 08:00-ից մինչև ժամը 18:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով
67	Քվեարկությունն ավարտվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 20:00-ին***	56, մաս 1 69, մաս 1	31.03.2020-ի ժամը 20:00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով
68	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձամագրությունը հրապարակվում է. ***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո***	72, մաս 5	մինչև 01.04.2020-ի ժամը 06:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով
69	Ընդհանուր փաթեթը (այդ թվում՝ ընտրողների ցուցակները պարունակող փոքր պարկը), քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը, գրանցամատյանը և հանձնաժողովի կնիքը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում***	72, մաս 9	մինչև 01.04.2020-ի ժամը 08:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար
70	Ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների աղյուսակավորումը ավարտում է. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում***	74, մաս 2	մինչև 01.04.2020-ի ժամը 14:00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
71	Քվեարկության նախնական արդյունքների աղյուսակավորումն ավարտվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ներբեռնելու հնարավորությամբ տեղադրում է. ***ընտրական տեղամասից քվեարկության արդյունքների վերաբերյալ վերջին տեղեկությունները ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան քվեարկության ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում***	8, մաս 10	մինչև 01.04.2020-ի ժամը 20:00-ն	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
72	Ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում, արձանագրությամբ վավերացվում, Արցախի հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակվում են. ***քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո***	76, մաս 1	մինչև 01.04.2020-ի ժամը 20:00-ն	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

73	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում***	74, մաս 3	մինչև 01.04.2020-ի ժամը 20:00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
74	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել. ***1) քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն, կամ*** ***2) քվեարկությունից հետո 2-րդ օրը՝ ժամը 09:00-ից մինչև ժամը 11:00-ն***	50, մաս 1	1) 01.04.2020 -ի ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն 2) 02.04.2020-ի ժամը 09:00-ից մինչև ժամը 11:00-ն	Հանրապետության նախագահի թեկնածու, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու, վստահված անձ, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ
75	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել. ***1) քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն, կամ*** ***2) քվեարկությունից հետո 2-րդ օրը՝ ժամը 09:00-ից մինչև ժամը 11:00-ն***	48, մաս 12, 14	1) 01.04.2020 -ի ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն 2) 02.04.2020-ի ժամը 09:00-ից մինչև ժամը 11:00-ն	Հանրապետության նախագահի թեկնածու, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու, վստահված անձ, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ
76	Քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների սկանավորումն իրականացվում է. ***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից սկսած***	74, մաս 4	սկսած 01.04.2020 -ի ժամը 12:00-ից	Տարածքային ընտրական հանձնաժողով
77	Տարածքային ընտրական հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են. ***վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված վերջնաժամկետի օրը՝ ժամը 14:00-ից, և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը՝ ժամը 14:00-ին***	50, մաս 6	01.04.2020-ի ժամը 14:00-ից մինչև 05.04.2020-ի ժամը 14:00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
78	Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում Կենտրոնական ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել. ***ընտրության արդյունքներն ամփոփելու համար սահմանված ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն***	48, մաս 13, 15	մինչև 05.04.2020-ի ժամը 18:00-ն	Նախագահի թեկնածու, կուսակցություն (կուսակցությունների դաշինք)
79	Քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է. ***1) քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում*** 2) ***քվեարկության արդյունքների հետ կապված բողոք լինելու դեպքում՝ քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը***	76, մաս 2	1) մինչև 03.04.2020-ի ժամը 20:00-ն 2) 07.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

80	Ընտրության արդյունքներն ամփոփվում և ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշում ընդունվում է. ***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը***	76, մաս 6	07.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
81	Քվեարկության արդյունքների վերջնական աղյուսակավորումը՝ ըստ ընտրական տեղամասերի, տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների և ընտրական տարածքների, ներբեռնելու հնարավորությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է. ***ընտրության արդյունքներով որոշումն ընդունելուց հետո՝ ոչ ուշ, քան նիստի ավարտից հետո՝ 6 ժամվա ընթացքում***	8, մաս 10	07.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
82	Ընտրական գրավի գումարը վերադարձվում է. ***գրավոր դիմումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում***	25, մաս 2	07.04.2020-ից հետո դիմելու դեպքում	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
83	Ազգային ժողովի խմբակցությունների կողմից Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում նշանակված աուդիտորների գործունեությունն ավարտվում է. ***ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո՝ 5-րդ օրը***	29, մաս 3	12.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
84	Ընտրությունների կազմակերպման և անցկացման, ԱՀ ընտրական օրենսգրքի խախտումների վերլուծության վերաբերյալ հաղորդագրությամբ և առաջարկություններով Ազգային ժողովում հանդես է գալիս. ***ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո՝ 3 ամսվա ընթացքում***	51, մաս 3	մինչև 07.06.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ կամ նրա հանձնարարությամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որևէ անդամ